



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱԿԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության իր. Կառավարական 3-րդ ստն  
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia  
0010, Армения, г.Ереван. Дом правительства, здание N3  
պաշտոնական էլ.փոստ 10010608@e-citizen.am  
էլ.փոստ /E-mail/ ձև.նօրիտ min\_ecology@mnp.am  
Web page: www.mnp.am  
☎ (374 11) 818 520  
☎ (374 11) 818 506

№ 5/07 1/52373  
«20» «11» 2017թ.

«Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ-ի  
նախագահ Մ. Չաքրյանին

Հարգելի տիկին Չաքրյան

Ի պատասխան Ձեր 2017թ. նոյեմբերի 9-ի գրության, տեղեկացնում եմ, որ «Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրի մասին» արձանագրության ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել Օրհուաի կոնվենցիայի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ազգային զեկույցներում /կետ 5.9/, որոնք տեղադրված են ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում /http://www.mnp.am/?p=169/ կամ ՄԱԿ-ի ԵՏՀ Օրհուաի կոնվենցիայի քարտուղարության կայքում:

ԱԱՏՌ արձանագրության վավերացման գործընթացն արագացնելու համար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կամ մասնակցությամբ կազմակերպվել և իրականացվել են.

1. Դասընթացներ քաղծառայողների և շահագրգիռ հանրության համար:
2. Ծրագրային առաջարկներ են պատրաստվել և ներկայացվել դոնոր միջազգային կառույցներին, սակայն ԱԱՏՌ Արձանագրության մեծ ծավալի տեղեկատվության և համակարգչային ազգային ծրագրի բացակայության պատճառով միջազգային կառույցները չեն կարողանում լիովին ֆինանսավորել տվյալ ծրագրերը: ԱԱՏՌ համակարգչային ծրագրի ձեռքբերումը, դրա տեղայնացումը և թարգմանությունը պահանջում է բավականի մեծ ծավալի ֆինանսական և մարդկային ռեսուրսներ:
3. ԱԱՏՌ արձանագրության հիմնական դրույթներն ընդգրկվել են <<Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին>> ՀՀ օրենքի նախագծում:
4. ԱԱՏՌ մասին արձանագրության վերաբերյալ արդյունաբերական ձեռնարկությունների, մարզպետարանների, Օրհուա կենտրոնների



համակարգողների և հասարակական կառույցների ներկայացուցիչների համար կազմակերպվել են կարճատև դասընթացներ/քննարկումներ:

5. Մշակվել են համապատասխան նյութեր հետազայում ինտերակտիվ դասընթացներ կազմակերպելու համար:
  6. Հայերեն լեզվով նախապատրաստվել է ձեռնարկությունների համար հաշվետվության ներկայացման ձևաչափը:
  7. Հայաստանի Հանրապետությունը և Բելառուսի Հանրապետությունը մանդատ են ստացել՝ ԱԵԿԿԱ 12 երկրների համար տեխնիկական աջակցության փաստաթուղթ պատրաստելու համար: Տվյալ փաստաթուղթը /MP.PRTR/WG.1/2013/4/ նախապատրաստվել և հաստատվել է Արձանագրության կողմերի 2-րդ նստաշրջանում ներկայացվելու համար:
  8. ՀՀ ազգային համակարգողը ՄԱԿ ԵՏՀ ԱԱՏՌ Արձանագրության աշխատանքային խմբի 4-րդ նիստին ներկայացրել է ԱԵԿԿԱ 12 երկրների վերաբերյալ վերլուծություն:
  9. «Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչը վերընտրվել է Հայաստանի 2017թ. Արձանագրության Իրականացման Կոմիտեի կազմում:
  10. 2016-2019թթ. իրականացվելու է «Բնապահպանական Միասնական Տեղեկատվական Համակարգի Սկզբունքների և Պրակտիկայի ներդրումը Արևելյան Հարևանության Երկրներում» (SEIS Արևելք) ծրագիրը, որի նպատակն է բարելավել բնապահպանական հաշվետվողականության մասով միջազգային/ տարածաշրջանային պարտավորությունների կատարումը:
  11. Արձանագրության իրականացման համար նախապատրաստվել է ՀՀ օրենսդրության փոփոխությամբ պայմանավորված ծրագրային հայտ, ինչի շուրջ բանակցությունները հնարավոր դոնորների հետ շարունակվում են:
- Համակարգչային ծրագրի հետ կապված հարցը շատ արդիական է ԱԵԿԿԱ երկրների համար և բարձրացվել է մինչ այժմ կայացած ՄԱԿ ԵՏՀ աշխատանքային խմբի հանդիպումների ժամանակ: Այն նաև ներառված է Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության կողմից ԱԵԿԿԱ երկրների համար մշակված փաստաթղթում:

Հարգանքով՝

Հ.Հովհաննիսյան

ՏՀՀԿ վարչություն  
Ա.Սուքիասյան  
011 818 517